Ամեպս 27 ին Քիշնեվում վախճանեցաւ Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ Թեմական Առաջնորդ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԳԻՆԵԱՆՑ 66 տարեկան հասակում՝ կաթուածից։

Հանգուցեալը աշխարհիկ վիճակից էր և իւր ուսումն առած էր Խարասուբաղարի Հայոց դպրոցում։ 1844 Թուականին նշանակուեցաւ Հրամանաւ Ներսէս Արքեպիսկոպոսի Բեսարաբիոյ Թեմի առաջնորդի Օրբաղարի Հայոց ծխական դպրոցի ուսուցիչ։ 1852 ին ըստ առաջարկութեան նոյն վիճակի առաջնորդ Մատթէոս Արքեպիսկոպոսի ընդունվեցաւ եկեղեցական դասի մէջ։ Իսկ 1854 ին ի Տէր Հանգուցեալ Ներսէս Ե. Կաթուղիկոսի Հրամանաւ ձեռնադրեցաւ սարկաւագ և կուսակրօն քահանայ։ 1856 Թ. Հրամանաւ նոյն Հայրապետի նշանակուեցաւ վանահայր Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանուց։ իսկ 1857 Թ. կարգադրութեամբ Ս. Սինոդի նշանակուեցաւ յաջորդ Ախալցխայի։ որ պաշտօնը վարեց մինչև 1867 Թ. 1864 ին ի Տէր Հանգուցեալ Մատթէոս Կաթուղիկոսից ձեռնադրուեցաւ Եպիսկոպոս։ 1867 ին հոկտեմբերի 27 ին ըստ առաջարկութեան երջանկայիշատակ Գէորգ Կաթուղիկոսի բարձրագոյնս հաստատուեցաւ անդամ Ս. Սինոդի։ 1873 ին արձակուեցաւ այդ պաշտօնից և 1876 ին նշանակուեցաւ կրկին Ախալցխայի յաջորդ։ 1884 Թ. նշանակուեցաւ ժամանակաւոր կառավարիչ Թեմին Ղարբաղի ցընտրութիւն կաթուղիկոսի որ պաշտօնը վարեց իրրև հաստատուած առաջնորդ մինչև 1887 Թուականն։ երբ տեղափոխուեցաւ նոյն պաշտօնով Բեսարաբիոյ Թեմը։ Հանգուցեալն իւր ծառայութեանց համար վարձատրուեցաւ թէ Կառավարութեան և թէ հոգևոր իշխանութեան կողմից։ Ունէր վարդապետական խաչ պնա-

կի։ Աննայի երկրորդ աստիճանի և Ստանիսլավի առաջին աստիճանի շքանշանները։ Իւր ծառայութիւնը կատարած է հաւատարմութեամբ։ որոյ համար միշտ վայելում էր ժողովրդոց և իշխանութեան յարգանքը։

Ցէր լուսաւորեսցէ զՀոգի հանգուցելոյն և դասեսցէ ընդ սուրբս և ընդ սիրելիս իւր։

Անցեալ Օգոստոս ամսոյ 18 ին վախճանեցաւ Հին Նախիջևանի յաջորդ ՅՈՎՍԷՓ Ծ.ԵՐԱԳՈՑՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՓԻՆԱՁԵԱՆ 40 տարեկան հասակում։

Հանգուցեալն իւր ուսումն աւարտած էր Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց դպրոցում և յառաջադէմ աշակերտներից մին եղած է։ 1859 թ. ընդունուեցաւ կուսակրօն եկեղեցականաց դասը և 1864 ին ստացաւ չորս աստիճան։ Պարապում էր գրագրութեամբ ի Ցէր հանգուցեալ Մատթէոս Կաթողիկոսի մօտ։ դասատու էր կրօնի ժառանգաւորաց դպրոցում 1865—1866 թ. 1867 ին Դանիէլ Արքեպիսկոպոսից ձեռնադրուեցաւ սարկաւագ և նշանակուեցաւ դասատու հայ գրականութեան և կրօնի Շամախու թեմական դպրոցում. Իսկ 1872 ին կուսակրօն քահանայութեան աստիճան ստացաւ Շամախու թեմական Անդրէաս Արքեպիսկոպոսից. Նոյն տարին վարդապետութեան կոչումն ստանալից յետ՝ տեղափոխուեցաւ Բագու նշանակուելով տեսուչ արական և իգական ծխական հոգևոր դպրոցների Հայոց և քարոզիչ ու վարձատրուեցաւ խարա փիլոնով։

1875 ին նշանակուեցաւ հայ դպրութեան և կրօնի դասատու Աղեքսանդրապօլի հոգևոր դպրոցում. 1876 ին նշանակուեցաւ Տաթևու հոգևոր կառավարութեան անդամ։ Իսկ 1877 ին Շուշու հոգևոր դպրոցում վարեց հայ դպրութեան և կրօնի դասատուի պաշտօն։ 1879 ին նշանակուելով Գանձասարի վանուց վանահայր ուրիթ եղաւ վերանորոգման ինն մասանց վանքի։ որոյ համար և վարձատրուեցաւ հոգևոր իշխանութիւնից։ 1883 ին նշանակուեցաւ դասատու Հայոց լեզուի և կրօնի Ս. Աթոռոյս Ճեմարանում։ Ապա նշանակուեցաւ յաջորդ Հին Նախիջևանի։ և այս պաշտօնավարութեան մէջ էլ։ մահը կտրեց նորա կենաց թելը 40 տարեկան հասակում։ խոր սգոյ մէջ թողնելով նորա հօտն։ որին հանգուցեալը յոյժ սիրելի էր եղած իբրև հոգևոր հայր և կառավարիչ։

Ցէր լուսաւորեսցէ զՀոգի հանգուցելոյն։